Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (25 դասաժամ); պատմության (19 դասաժամ), հասարակագիտության (7 դասաժամ), մաթեմատիկայի (23 դասաժամ), ռուսաց լեզվի (27 դասաժամ), քիմիայի (13 դասաժամ), ֆիզկուլտուրայի (26 դասաժամ), իմ հայրենիքը, իմ հայրենիքը և աշխարհը (8 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. օգոստոսի 13-ից մինչև 2025թ. օգոստոսի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիփանիկի հիմնական դպրոցում. հասցեն՝ գյուղ Սիփանիկ, Գյումրու փողոց 1:

Տեղեկությունների համար զանգահարել (077)-48-89-79 հեռախոսահամարով: